# ՄԱՐԶԻ ԱՅԳՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1], 77[2], և 77[3] հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

**որոշում եմ՝**

1. Առաջարկել մարզի Այգուտ համայնքի ղեկավարին՝

1) համայնքի ավագանու նիստում հաստատել ավագանու կանոնակարգը և պետական գրանցման ենթարկելուց հետո դնել գործողության մեջ.
2) մշակել, համայնքի ավագանու որոշմամբ, հաստատել և գործողության մեջ դնել համայնքի զարգացման ծրագիրը.
3) <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներին համապատասխան պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ներկայացնել ընդունված և ընդունվող նորմատիվ իրավական ակտերը.
4) ընդունվող իրավական ակտերը վերնագրերով, իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 40-րդ և 41-րդ հոդվածների պահանջներին.
5) համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետի /ծածկագիր՝ 3.2-1/ թափուր պաշտոնը համալրելու համար հայտարարել մրցույթ.
6) համայնքային ծառայողների կադրային գործերի վարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան.
7) աշխատակազմի քարտուղարի կողմից 2010թ. համար իր գույքի և եկամուտների մասին հայտարարագիր չներկայացնելը, համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետի նրան պաշտոնից ազատելու հիմք է.
8) հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, վարել գլխավոր գիրք, ծախսերը գրանցել հաշվապահական հաշիվներում, ճիշտ լրացնել հողի հարկի գանձումների անդորրագրերը.
9) գնումներն իրականացնել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.
10) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հուլիսի 25-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ